ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք.Երևան, Արգիշտիի 1

№ 61/729

«07» 07 2017թ.

«ԷԴՄՈՆ ԵՎ ԷԴՎԱՐԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ
ք. Երևան, 16-րդ թաղամաս, 25/111

Հարգելի պարոն Հարությունյան

Երևանի քաղաքապետարանի և «Էդմոն և Էդվարդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 09.03.2017 թվականին կնքված «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/30-7» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Շենգավիթ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի տեխ. բնութագրին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների 25% -ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը, ևս 25% -ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացուցային օրը և ևս 25% -ի կատարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 105-րդ օրացուցային օրը, իսկ մնացած 25%-ի կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում՝ մինչև 2017թ սեպտեմբերի 30-ը ներառյալ»:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.2 և 1.3 կետերի պահանջները, որը Ձեր կողմից ընդունվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարին 28.06.2017 թվականին հասցեագրված համապատասխան գրությամբ:

Վերը նշված գրությամբ ընկերությունը փաստացի հրաժարվել է պայմանագրային պարտավորությունները կատարելուց՝ պատճառաբանելով, որ չունի համանպատասխան միջոցներ և հնարավորություն աշխատանքները շարունակելու և վերացնելու առկա թերությունները:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերը նշված գրությամբ Ընկերությունը փաստացի հրաժարվել է կատարել Պայմանագրով նախատեսված պարտավորությունները, ուստի տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է վճարել Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանքը՝ Պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում տեխ. բնութագրին և նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված, ինչպես նաև՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ առաջարկում եմ Ձեզ սույն Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև օրենսդրական պահանջի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 6.3 կետով հաշվարկված տուգանքը՝ 104775 (մեկ հարյուր չորս հազար յոթ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, որը հարկավոր է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Գ. Հուրոյան
011 514-194